ОСМАНСКАЯ ИМПЕРИЯ И СТРАНЫ ЦЕНТРАЛЬНОЙ, ВОСТОЧНОЙ И ЮГО-ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ В XV—XVI вв. ГЛАВНЫЕ ТЕНДЕНЦИИ ПОЛИТИЧЕСКИХ ВЗАИМООТНОШЕНИЙ. М., 1984. 301 с.

Միջնադարում Եվրոպական երկրների Օսմանյան կայսրության փոխհարաբերությունների պատմությունը իր վրա է հրավիրել ինչպես անցյալ հարյուրամյակի, այնպես էլ ժամանակակից հետազոտողների ուշադրությունը։ Վերջերս լույս տեսավ XV—XVI դդ. կենտրոնական, հարավ-արևելյան և Արևելյան Եվրոպայի երկրների հետ օսմանյան պետության քաղաքական փոխհարաբերությունների միտումները լուսաբանող մի նոր աշխատություն։

Դրախոսվող աշխատության գլխավոր արժանիքն այն է, որ նրա հեղինակները հեռանում են իրենց հետաքրքրող պրոբլեմի ուսումնասիրության ավանդական մեթոդից։ Մինչ այժմ դրականության մեջ հիմնական շեշտը դնում էին հարավ-արևելյան, կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների հետ Օսմանյան կայսրության փոխհարաբերությունների ուսումնասիրության առանձին ասպեկտների վրա։

Դրախոսվող աշխատության մեջ հեղինակներն իրենց առջև դրել են ավելի դժվարին խնդիր՝ XV դարի—XVI դարի երկրորդ կեսի միջազգային քաղաքականության ընդհանուր ենթատեքստում բացահայտել իրենց ուսումնասիրած ռեգիոնի բոլոր քաղաքական ուժերի բարդ փոխազդեցությունը, առանձնացնելով այդ հարաբերությունների կարևորագույն փուլերը։ Մեզ թվում է, որ դրրի հեղինակներին հաջողվել է Օսմանյան կայսրության և հարավ-արևելյան, կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի երկրների երկկողմ փոխհարաբերությունների ուղղությամբ նախընթաց պատմագիտության ձեռք բերած նվաճումների հիման վրա կազմել նրանց քաղաքական փոխհարաբերությունների ընդհանուր պատկերը, բացահայտել վերը նշված ժամանակաշրջանում ձևավորված գլխավոր միտումներն ու բնութագրական գծերը, ցույց տալ ուսումնասիրվող ռեգիոնի միջազգային հարաբերությունների պատմության մեջ երկրներից յուրաքանչյուրի օբյեկտիվ-պատմական դերը։

Դրախոսվող աշխատության հեղինակները հետազոտում են օսմանյան պետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները, բացահայտում այդ ուղղությունների ակտիվության փոփոխությունների որոշակի օրինաչափությունը։ Օսմանյան կայսրությունը, նշվում է դրքում, XV դարի վերջին վերահսկում էր կարևոր քարավանային առևտրական ճանապարհների փոքրասիական տեղամասը, որով հնուց ի վեր ասիական ապրանքները (մետաքս և համեմունքներ) բերվում էին Եվրոպա։

XV դարի երկրորդ կեսին օսմանների եվրոպական առևտրի ուղղվածությունը փոխվեց։ Վենետիկի ու Պորտուգալիայի մրցակցության հետևանքով այն տեղաշարժվեց դեպի հյուսիս-արևելք։ Առևտրական ճանապարհների շրջադարձը օսմանցիների համար առավել կարևոր դարձրեց կապերն Արևելյան Եվրոպայի, մասնավորապես Լեհաստանի ու Ռուսաստանի հետ։

XVI դարի սկզբին Օսմանյան կայսրության արտաքին քաղաքական ակտիվության գլխավոր ուղղությունը դարձավ ասիականը, որը նշանակալի չափով նաև կապված էր մետաքսի մեծ ճանապարհով առևտուրը վերահսկելու ձգտման հետ, միևնույն ժամանակ այն օգտագործելով իրրև քաղաքական ճնշման գործիք։ XVI դարի երկրորդ տասնամյակից մինչև XVIII դարի 30-ական թթ. Թուրքիայի և սեֆյան Իրանի միջև մրցակցության և գրեթե անընդմեջ պատերազմների առարկա էին Անդրկովկասը և եվրոպա-ասիական առևտրի ավանդական քարավանային ճանապարհների վերահսկողությունը։

Այստեղ, սակայն, հարց է ծագում, թե որոնք էին օսմանցիների արտաքին քաղաքականության ուղղությունների փոփոխականության պատճառները։ Հեղինակները հարցը այսպես հստակ ձևով չեն դնում։ Մինչդեռ գրքում եղած փաստական նյութը հնարավորություն է տալիս բացատրել, թե ինչու էին Թուրքերի արտաքին քաղաքական ակտիվության ուղղությունների փոփոխությունները թելադրվում Ասիայի ու Եվրոպայի այս կամ այն առևտրական ճանապարհների վերահսկողության անհրաժեշտությամբ։ Օսմանցիների նման քաղաքականությունը մեծապես բխում էր թուրքական պետության տնտեսական զարգացման առանձնահատկություններից, զարգացում, որը գտնվում էր խիստ ցածր աստիճանի վրա, քանի որ օսմանյան հասարակությունը ամենից քիչ էր մտահոգված սեփական արտադրության հաջողություններով։ Այդ առումով մի-

---

[1] Հեղինակային կոլեկտիվ. Ի. Բ. Գրեկով, Գ. Գ. Լիտավրին, Յու. Ա. Լիմոնով, Ե. Պ. Նաումով, Ս. Ֆ. Օրեշկովա, Ա. Ի. Ռոգով, Լ. Ե. Սեմյոնովա, Ս. Օ. Շմիդտ, Վ. Պ. Շուշարին։ Խմբագրական կոլեգիա. Ի. Բ. Գրեկով (պատ. խմբ.), Լ. Վ. Զարորովսկի (պատ. քարտուղար), Գ. Գ. Լիտավրին, Ս. Ֆ. Օրեշկովա, Լ. Ե. Սեմյոնովա (պատ. խմբ. տեղակալ)։

անգամայն օրինաչափ է հեղինակների դիտողությունն օսմանցիների տնտեսության մասին. «Սեփական արտադրության նկատմամբ որևէ պրոտեկցիոնիստական միջոցների անհրաժեշտությունը,— գրում են նրանք,— չէր գիտակցվում այն ժամանակվա կայսրության տնտեսական պատկերացումներում» (էջ 39)։

Գրախոսվող գրքի հիմնական եզրահանգումներից մեկն այն գրությունն է, որ XV դարում—XVI դարի սկզբին Բ. Դուռը Եվրոպայի քաղաքական կյանքում հանդես էր գալիս իբրև մշտական գործոն։ Հեղինակների բերած փաստական նյութը ցույց է տալիս, որ եվրոպական գործերում օսմանցիների շահագրգռվածության աստիճանը միշտ միատեսակ չէր։ XVI դարի սկզբին Եվրոպայի համար օսմանյան վտանգի սրությունը թուլացել էր։ Դրա պատճառը հեղինակները համարում են այն, որ սկսած XVI դարի առաջին տասնամյակից Օսմանյան կայսրության ռազմական ու քաղաքական պլաններում ավելի ու ավելի մեծ տեղ է սկսում գրավել Մերձավոր Արևելքը։ Դրա հետ մեկտեղ հեղինակները նշում են, որ Եվրոպայի քաղաքական կյանքում օսմանյան պրոբլեմի կողքին ավելի սուր է դառնում մեկ այլ պրոբլեմ՝ Հաբսբուրգների ուժեղացումը։ Այդ երկու պրոբլեմները փոխկապակցված էին, քանի որ դրանց լուծումը հանդում էր երկու կայսրությունների՝ Հաբսբուրգյան և Օսմանյան, առճակատմանը (էջ 125)։ Այդ կապակցությամբ ծագում է մի հարց, որը չի գրավել հեղինակների ուշադրությունը։ Թե՞ Եվրոպայում ազդեցություն ունենալու համար Հաբսբուրգների մրցակցությունը, թե՞ Մերձավոր Արևելքում առևտրական ճանապարհների վրա հսկողություն սահմանելու անհրաժեշտությունը XVI դարի սկզբներին հանգեցրին եվրոպական մայրցամաքում թուրքերի դիրքերի որոշ թուլացմանը։ Հայտնի է, որ XV—XVI դդ. սահմանագլխին Եվրոպայում մի շարք ապակենտրոնացված ընդարձակ պետական կազմավորումների կողքին սկսեցին ուժ հավաքել կենտրոնացված պետությունները։ Այդ տերությունների բնորոշ էր նոր տարածքներ ձեռք բերելու ձգտումը (այստեղից էլ՝ եվրոպական պետությունների միջև ծագած սուր հակասությունները), ինչպես նաև Եվրոպայում օսմանցիների ազդեցության տարածմանը ակտիվորեն դիմակայելը։ Մյուս կողմից, եվրոպական գործերից օսմանցիների ուշադրությունը շեղեցին XVI դարում սկսված թուրք-պարսկական պատերազմները։ Մեր կարծիքով, Եվրոպայում օսմանցիների քաղաքականության վրա ազդած նշված երկու գործոններն էլ օրինաչափ են։ Այստեղ հարկ է ավելացնել, որ այդ շրջանում օսմանցիները խնդիր էին դրել այնպես հավասարակշռել իրենց քաղաքականությունը, որպեսզի Մերձավոր Արևելքի ու Եվրոպական մայրցամաքի միջև թուրքական արքունիքի տակտիկական տատանումները միջազգային լարվածության այդ կամ այլ ժամանակաշրջաններում բացասաբար չանդրադառնային Բ. Դռան դիրքերի վրա այն մարզերում, որտեղ օսմանյան ակտիվությունը ժամանակաշրջանում էր։

Գրախոսվող աշխատության հեղինակները նշանակալի տեղ են հատկացնում Արևելյան Եվրոպայում Օսմանյան կայսրության և նրա վասալ Ղրիմի խանության քաղաքական համագործակցության բնույթի ուսումնասիրությանը։ Պրոբլեմի ակունքները սկիզբ են առել XV դարում։ Մերձդանուբյան տարածքում իր նվաճողական խնդիրներն իրագործելու համար թուրքական սուլթանին անհրաժեշտ էր ամենից առաջ ապահովել թևերը Սև ծովի հյուսիսային ափերին և Ադրիատիկում։ Այդ իսկ պատճառով XV դարի 70-ական թթ. Բ. Դուռը իրեն ենթարկեց Ղրիմը և գրավեց Ալբանին։ Գրքում բերված փաստերը վկայում են, որ այդ ժամանակից Ղրիմը սկսում է կարևոր դեր խաղալ հեղինակների ուսումնասիրած գրեթե ամբողջ ռեգիոնի տարածքում Թուրքիայի կիրառած քաղաքականության իրականացման գործում։ Խնդրո առարկա աշխատության մեջ խորությամբ և գիտականորեն հիմնավորված ձևով ցույց է տրված այդ երկու պետությունների արտաքին քաղաքականության մեխանիզմը և բացահայտված է այդ դաշինքի դերը XV—XVII դդ. ընթացքում Եվրոպայում միջազգային հարաբերությունների զարգացման գործում։ Օսմանյան կայսրության, Ղրիմի և արևելաեկրոպական պետությունների փոխհարաբերությունները հեռու էին պարզ լինելուց։ Դրանց բարդությունն այն էր, որ գործնականում իրականացնելով միասնական, լավ կոորդինացված քաղաքականություն, որը ենթարկված էր ընդհանուր, հեռուն գնացող նպատակներին, Թուրքիան ու նրա վասալ Ղրիմը միջազգային ասպարեզում այն ձևականորեն ներկայացնում էին իբրև տարանջատված, ներքին համաձայնությունից ու միասնությունից զուրկ քաղաքականություն։ Օսմանա-ղրիմյան քաղաքականության նման առանձնահատկությունն ապակողմնորոշում էր եվրոպական մայրցամաքի ղեկավար շրջաններին (էջ 83—84)։ Այստեղ տեղին է նկատել, որ XVI դարում Թուրքիայի և Ղրիմի արտաքին քաղաքական գործողությունների վերլուծությունը, որն արված է գրախոսվող աշխատության մեջ, հնարավորություն է տալիս հասկանալու նշանակալիորեն ուշ՝ XVIII դարում, արդեն այլ ռեգիոնում՝ Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, միջազգային հարաբերությունների զարգացման մի քանի ասպեկտները։ Պարզաբանման համար նշենք այդ ասպեկտներից մեկը՝ XVIII դարի ա-

ասային երեսնամյակում Իրանում և Անդրկովկասում Ռուսաստանի և Թուրքիայի քաղաքական շահերի բախումը և Ղրիմի՝ իբրև այդ ռեգիոնում Ռուսաստանի քաղաքական ակտիվությունը դսպող գործոնի դերը։ Այսպիսով, Թուրքիայի և Ղրիմի դաշինքն ու գործողությունների համաձայնեցվածությունը նշանակալիորեն բարդացնում էին հարավում Ռուսաստանի արտաքին քաղաքական պլանների իրականացումը։ Ռուսաստանը XVIII դարում ստիպված էր հաշվի նստել միջազգային հարաբերությունների ոլորտում երկու գործոնների առկայության հետ. առաջինը Իրանում և Անդրկովկասում Թուրքիայի էքսպանսիոնիստական պատվախնդրություններն էին, որոնք դարի ասային երեսնամյակում սեֆյան Իրանի բաժանման հետևանքով իրականություն էին դարձել, երկրորդը՝ Ղրիմի նենգ ու նուրբ քաղաքականությունը, որը Սև ծովի հյուսիսային ափերի իր բլոկադայով Ռուսաստանին դրել էր շատ ծանր վիճակի մեջ։ Այդ իսկ պատճառով Ռուսաստանը պետք է Օսմանյան կայսրությանը հարվածներ հասցներ ոչ թե Անդրկովկասում, այլ Սև ծովի հյուսիսային ափերին։ Օսմանյան դիվանագիտությունը հաշվի էր առնում այդ գործոնը։ Ուստի XVIII դարի 20-ական թթ. Իրանում և Անդրկովկասում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները, այդ թվում՝ թուրքական ներխուժումը, Թուրքիայի և Ղրիմի լավ համաձայնեցված գործողություններում նշանակալի չափով շեղող մոմենտներ էին։ Թուրքիան և Ղրիմը հմտորեն իրենց քաղաքականության լծորդն էին դարձրել լեզգի խաներին, որոնք (ոչ առանց Թուրքիայի ու Ղրիմի թողտվության) Ռուսաստանին 1722 թ. Կովկասում և Իրանում դրդեցին ինչ-որ չափով վաղաժամ ակտիվության։ Պետերբուրգը, չնայած որոշ ուշացումով, բայց այնուամենայնիվ կուահեց օսմանյան դիվանագիտության նուրբ բայլը։ Դրա ապացույցն այն հանգամանքն է, որ Ռուսաստանը միանգամայն հետևողականորեն և հմտորեն խուսափում էր այդ ռեգիոնում Թուրքիայի հետ ռազմական առճակատումից՝ օսմանցիների նկատմամբ վարելով քաղաքական զսպման քաղաքականություն։ Նրման քաղաքականության էությունն այն էր, որ Ռուսաստանը մի կողմից նպաստում էր Մերձավոր Արևելքում կենտրոնացված իրանական պետության վերականգնմանը, որը կարող էր ապահովել այդ ռեգիոնում քաղաքական հավասարակշռությունը, մյուս կողմից՝ Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարը Պետերբուրգը հմտորեն ուղղում էր թուրքական ագրեսիայի դեմ, դրանով իսկ պատնեշ ստեղծելով դեպի Կասպից ծովի արևմտյան ափերը օսմանցիների առաջխաղացման ճանապարհին։

Գրքում քննարկված բոլոր հարցերը չէ, որ հեղինակներին հաջողվել է լուծել նույն ստուգանի համոզիչ։ Դրանցից մի քանիսը առաջ են բերում առարկություններ և բանավեճ։ Գրքում առկա են նաև կառուցվածքային անհարթություններ։ Մեր կարծիքով, ընդհանուր համատեքստից դուրս է մնացել հատուկ մի գլուխ, որտեղ ցույց է տրված սլավոնական ժողովուրդների գրականության ու հրապարակախոսության մեջ օսմանյան էքսպանսիայի և նրա դեմ պայքարի արտացոլումը։ Չնայած այդ գլխում պարունակվող նյութը գիտական հետաքրքրություն ունի, սակայն չպետք է մոռանալ, որ գիրքը նվիրված է քաղաքական փոխհարաբերությունների գլխավոր միտումների բացահայտմանը։

«Հարավ-արևելյան Եվրոպայի ժողովուրդները և Օսմանյան կայսրությունը XIV—XV դդ.» գլխում հեղինակները եզրակացնում են, որ «օսմանյան հարձակման նախօրյակին շարունակվում էր միջնադարյան հարավ-սլավոնական հասարակության առաջընթաց զարգացումը, որը բնութագրվեց ընդհատվեց Օսմանյան կայսրության ներխուժմամբ։ Բալկաններում օսմանյան ֆեոդալական վերնախավի տիրապետության հաստատումը նշանակում էր քրիստոնեությունը դավանող հարավ-սլավոնական և այլ բալկանյան ժողովուրդների հպատակեցում և անիրավահավասար դրություն» (էջ 50)։ Եվրոպայի երկրների վրա օսմանյան ներխուժման հետևանքների ամփոփիչ գնահատականը մեզ թվում է չափազանց մեղմ։ Հայտնի է, որ թուրքական էքսպանսիան կործանարար հետևանքներ ունեցավ նվաճված երկրների համար։ Այդ մասին գրել է դեռևս Մարքսը։ Օսմանյան ներխուժումը հանգեցրեց Բալկանյան թերակղզու ժողովուրդների սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի բոլոր ոլորտների անկմանը։ Եվ դա հիմա կարևոր է ընդգծել, քանի որ մի շարք թուրքագետներ, կեղծելով պատմությունը, փորձում են բանն այնպես ներկայացնել, թե իբր թուրքերի ներխուժումը բալկանյան ժողովուրդների կյանքում ինչ-որ դրական արդյունքներ է ունեցել։ Մեզ թվում է նաև, որ գրքի հեղինակները, բերելով Բալկաններում մահմեդական բնակչության աճի մասին թվական տվյալներ, թերագնահատում են բռնի մահմեդականացման փաստը։

Ամփոփենք. չնայած վերը նշված բացերին, գրքի հեղինակներին հաջողվել է նոր քայլ կատարել աշխատության մեջ արծարծված պրոբլեմների ուսումնասիրության ուղղությամբ։

Ժ. Հ. ԱՆԱՆՅԱՆ
Ջ. Հ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ